




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԲ. — ՇՐՋԱՆ ԺԹ. 1886 ՏԱՐԻ ԺԹ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

Մ Ա Հ

(Քաղաքային ընտիր կտորներ մեծահամար Քաղղիացի Մասիլիոն *) անուն
Վերմոնտի եպիսկոպոսի քարոզներից) :

Մարդոց կրքերը միշտ դարմանալի ու անհասկանալի մէկ բան
ունին. ամեն մարդ ձգտումէ կեանք ունենալ, տարել. մարդիկ
մահուան վերայ մտիկ են տալի իբրեւ վերջին թշուառութեան
վերայ: Բոլոր իրանց կրքերը իրանց կապումեն կեանքի հետ. և
սակայն հէնց իրանց այդ իսկ կրքերն են, որ իրանց անգագար
հրելով, տանումեն դէպի այն մահն, որից այդչափ դարհուրում

(*) Այս մեծահամար եպիսկոպոսը ծնաւ 1663 թիւ Յունիսի 24 ին,
պալատական քարոզիչ նշանակուեց 1699 ին, Վերմոնտի եպիսկոպոսութեան
պատուին բարձրացաւ 1717 ին, վախճանուեց Սեպտեմբերի 18 ին 1742
թուի: Լուգովիկոս ԺԴ. Քաղղիոյ մեծ թագաւորը, մի օր սորա քարոզը
լսելուց յետոյ, ասաց նրան. «Հայր, ես շատ մեծ քարոզիչներ եմ լսել իմ
պալատական մատուումս, ու շատ զոհ եմ մնացել. բայց երբ որ ձեր ասած
քարոզներն եմ լսում, ինքս ինձնից շատ դժգոհ եմ մնում»: Փա-
րիզու թատրոնի՝ Ժամանակին ամենաբեկի դերասանն ևս, որ ցանկա-
ցել էր նորա քարոզը լսել, հիացած մնաց նորա հազուագիւտ համոզիչ շը-

են. և այնպէս է երևում, որ մարդիկ ապրումն են նորա համար միայն, որ շուտ անեն, մեռնեն:

Ամեն մի մարդ իւր ապագայի մասին այնպիսի չլինելու բաներ է մտածում և իւր սրտին ցանկալի օրերի համար, այնպիսի երազներ է տեսնում, որ կախարդում է իւր միտքը. բազմաւորութիւնը մեզ երևում է միշտ հեռուում. մեր մեծերի, տէրերի մահն, այն մեծ տեսարանն, որ մեզ պարզ ցոյց է տալի աշխարհքիս ամեն բանի ունայն լինելն ու նորա մեզ տուած փառքի ոչնչութիւնն, նորանց մահը մեզ փոխել է տալի մեր դիտաւորութիւնները, բայց ոչ թէ մեր սիրտը: Ամեն մի մարդ փորձում է նոր նոր ճանապարհներով բազմաւորութեան հասնել: Նոր ծրագրեր ենք կազմում մեզ համար, նոր յատակագիծ ենք շինում մեր տան ու նորա ունենալու կարգ ու կանոնի համար, մենք մեզ միտքաբանք մեր ունեցած կորուստների մասին նոր ակնկալութիւններով, նոր յոյսերով: Մեր ծրագրերն անգաղար ոչինչ են դուրս գալի, իսկ մեր յոյսերը նորից կենդանանում են մեր մէջ՝ մինչև անգամ մեր շինած յատակագծերի ոչնչանալուց: Մենք տեսնում ենք, որ այն ամեն բանն, ինչ որ մեզ շրջապատում է, մի նաւի է նմանում, որ խորտակւում է, բայց մենք այդ նաւի կոորտանքի միջից մեզ ազատում ենք, ուզում ենք՝ ասել թէ՛ մեր փուշ դուրս եկած ակնկալութիւններից մեզ չենք կորցնում:

Մահը գրեթէ միշտ օրհասաբեր փշրող ժայռն է մեծերի փառքի համար: Աւանայն գովասանքներն, որ մարդիկ նրանց շուայում էին՝ նրանց կենդանութեան ժամանակը, գրեթէ խսկոյն իջնում են նրանց հետ մոռացութեան գերեզմանն ու նրանց հետ միասին մոռացւում: Նոցա մահից յետոյ՝ երկար չեն տևում նոցա տուած գովեստները, կամ՝ եթէ նոքա մարդոց մէջ երբեմն երբեմն յիշվում են, պարտական են նոքա աւելի իրանց վերայ եղած չարախօսութիւններին ու պախարակութիւններին: Քան թէ ունայն գովեստներին, որ նրանց տալիս էին, քանի որ ողջ էին: Այնքան

նորհքի վերայ, որով քարոզում էր ճշմարտութիւնն, ու ասաց իւր հետ զրոնուած ընկերին. «բարեկամ, ահա՛ ճարտասանն ինչպէս կլինի, մենք կատակերգուներ ենք միայն»: Բոլոր առաջնակարգ ու հասկացող ժողովուրդն ևս նոյն էին վկայում նորա այդ զարմանալի շնորհքի մասին, որ գիտէր իւր յայտնա՝ ճշմարտութիւններն իրան լսողների սրտի խորքը թափանցել:

Ժամանակ էին մարդիկ նրանց վերայ գովեստներ խօսում: քանի որ նրանցից լաւութիւններ էին տեսնում: նրանց մեռնելուց յետոյ՝ ոչինչ են: որովհետեւ էլ ոչինչ չեն կարող անել: նրանց շողոքորթներն անգամ նրանց պակասութիւնների վերայ խօսողներն են դառնում: Նոր յոյսերը նոր լեզու են բանայինը տալի: միանողի փառքից մնացած կտոր փշորների վերայ բարձրացնում են մարդիկ ողջ մնացող: տարողի փառքի շէնքը, մեռնողի կողոպուտներով ու թողած առաքինութիւններով գեղեցիկացնում են այդ փառքի շէնքը այն մարդու համար: որ մեռնողի տեղն է բռնում: Մեծերը, իսկն որ ասենք, մարդոց կրքերի խաղալիքն են: նորանց փառքն անապահով ու անհաստատ է: ինչու որ աւելանումէ կամ նուազում նրանց գովողների ունեցած շահի հետ:

Առաջին քայլն, որ մարդս Կնումէ կեանքի մէջ, մի և նոյն Ժամանակ առաջին քայլն է: որ նորան մօտեցնումէ իւր գերեզմանին: Այն օրուանից, որ նա աշխարհք է գալի, մահուան վճիռն արգէն դուրս եկած է իւր համար: ու կարծես թէ՝ մի յանցանք լինէր իւր ապրելը, բաւական է նորա կեանք ունենալն, որ արժանի լինի մահուան: Մենք ամենքս էլ՝ մեր ծնած օրից՝ մահը կրումենք մեր սրտումը: կարծես թէ՝ մեր մօր փորումն արգէն ծծել ենք կամայ կամայ մեռցնող մի թոյն: որով աշխարհք ենք գալիս, որ մեզ հալում: մաշումէ, մէկիս աւելի: մէկիս պակաս: բայց յետ ու յաւաջ՝ բանը նորանով է վերջանում: որ մեզ գերեզման է տանում: Մենք ամեն օր էլ մեռնումենք: ամեն մի վայրկեանը մեր կեանքի մի կտորը պակում: փախցնումէ մեղանից՝ և մի քայլ առաջ տանում մեզ դէպի՝ գերեզման: Մեր մարմինն ուժից ընկնում, նուազումէ: մեր առողջութիւնը վատանում, ամեն մեզ շրջապատող բանը մեզ սաստիկ վնասում: փրջացնումէ մեր կեանքը: Կերակուրները մեզ աւերում են: զեղերը մեզ թաւայնում: այս հոգեւոր կրակն, որ մեզ ներսից հոգեւորում: մեզ ուտում: մոշումէ: ու մեր բոլոր կեանքն ուրիշ մի բան չէ: եթէ ոչ մահու մի տագնապ: մի օրհասական դրութիւն:

Այն ինքնահաճ բռնակալի փառքն, որ անիրաւ կերպով իշխանութիւնը յափշտակել է ու տիրումէ իրան ասող ժողովրդի վերայ, որ զրկել է անմեղին ու հալածել օրինաւոր Ժառանգին: որպէս զի ինքը նորա տեղը բռնի ու նորա կողոպուտներով զարդալուի: նորա փառքն, տեսնում: իւր հետը կթաղուի գերեզմանի

մէջ, նորա մահը աշխարհի առաջը դուրս կբերի նորա՝ ամօթալի կեանքն: Ա՛յն ժամանակն է, որ կվերանայ արգելքն, որ ժողովրդի լիզուին կապ էր դրել, և նորա յաջողութիւնն ու իշխանութիւնը վերջացած լինելով, մարդիկ նորա յիշատակն անիծելով, իրէժինդիր կլինին նրան այն սուտ գովեստների փոխանակ, որ սուպուռած էին տալու նորա անձնաւորութեանն: Ա՛յն ժամանակն է, որ երկիւղի և յուսոյ մեծ պատճառներն այլ ևս չլինելով, բաց կանեն այն վարագոյրն, որ նորա կեանքի ամենամօթալի հանգամանքներն էր ծածկում, թագցնում: Եյս աշխարհք կհանեն նորա փառաւոր ձեռնարկութիւնների ծածուկ պատճառն, այն ձեռնարկութիւնների, որ շողորթութները մեծացնումեն, բարձրացնում, մինչև երկինքը հանում, ու կբացատրեն նորանց անարժան ու նուաստ լինելը: Մօտիկից մտիկ կաան իւր երեւելի առաքինութիւնների վերայ, որոց մասին լսած էին, հաւատալով միամտաբար հասարակաց գովեստներին, ու նորա այդ ձեռնարկութեանց մէջ կգտնեն միայն այն, որ բնութեան ու ժողովրդի ամենատարբեր իրաւունքներն ոտնակոխ են եղած. այն ժամանակ խայտառակ կերպով կզրկեն նորան այդ բարբարոսական ու անիրաւ վաճից, որ նա վայելել էր. նորան կհատուցանեն փոխարէնն օրէնքի դէմ արած իւր յանցանքի ու անհաւատարմութեան, որ իւր մարդիկն շատ ուղեցել էին ծածկել, թագցնել: Նորա կեղծ վառքն մի շատ կարճ միջոց տեղութիւն ունեցած կլինի, իսկ նորա վատ անունն՝ դարերից յետոյ հազիւ կմոռացուի: Ապագայ սերունդը նորան կճանաչի միայն իւր յանցանքներով: Պատմութիւններն, որ ճշմարտութեան հաւատարիմ աւանդուպահներն են, մինչև վերջը կպահեն նորա անունն, որ նրան նախատինք ու ամօթ է բերել, և այն աստիճանն, որին որ նա բարձրացել է՝ օրէնք, պատիւ ու հաւատարմութիւն ոտնակոխ անելով, այն իւր բարձր աստիճանն, որ թողել էր նորան դուրս գալ աշխարհիս բէմը, հէնց այն աստիճանը կանմահացնի աշխարհիս վերայ միայն նորա պատուամոլութիւնն ու վատ անունը: Մահը վերջ է դնում նորա բոլոր փառքին, նորա ոչինչ լինելը ցոյց է աւելիս այն ամեն գործում, որոյ մէջը մեծ էր երեւում մարդոց աչքում. թողնում է նորան մենակ, անգոր, անօգնական, անպաշտպան: Ա՛յն շատ բարեկամներն, այն շողորթութներն, գերիներն, ու հպատակներն, որոց մէջ նա իրան անմահացած էր տեսնում, ի՛նչ ոչին

չին կարող անել նորա համար: այն մարդոց նման, որ հեռուից տեսնում են մի մարդ, որ խեղդվում է ջրի ալիքների մէջ, շատ շատ կարող են արտասուել նորա անբաղդութեանը վերայ, կամ անօգուտ աղօթքներ անել նորա փրկութեան համար: Այսպէս, մի նախ կռուելով մահուան հետ, զուր տեղն է ձեռքերը տարածում գէպի այն արարածներն, որ իւր աչքից հեռանում, անյայտանում են, անցեալը նորան երեւում է իբրեւ մի վաղանցիկ լուսաւորութիւն, որ փայլեց ու անհետացաւ, թողնելով իրան մութի մէջ: Եւ անհետանալով, մի անհուն անդունդ է, որոյ ոչ ծայրն է տեսնվում և ոչ ձոր, և ինքը յաւիտեան ոչնչանում է: ու անհետանում: Եւ խորհարհար, որ նա յաւիտեանական մի բան էր համարում, տեսնում է, որ ուրիշ մի բան չէ, բայց եթէ մի ցնորք, մի երեւակայական բան, մի երազ, որ անց է կենում, գնում: Ինչ որ նա իրական ու հաստատ բան էր համարում, անյայտանում է, ինչ որ նորան չնչին ու սնուցի բան էր երեւում, նորա աչքի առաջն է գալիս ու իր դառնում, և նորա թշուառութիւնն իւր մարմնի մէջ նոր լոյս է ծագում, բայց նորան նոր հակամիտութիւններ ու նոր սկիւտ չ' տալիս:

Մահը մեզ երեւում է միշտ հորիզոնի նման, որ մեր տեսողութեան շրջանն ու սահմանն է ցոյց տալիս, և որ մեզանից հեռանում է, քանի որ մենք նորան մօտենում ենք, միշտ տեսնելով նորան հեռուումը միայն՝ ու երբէք չկարծ ելով, որ նորան կկարողանանք հասնել: Ամեն մի մարդ իւր մէջն այնպէս է կարծում ու այնպէս է համոզուած, որ մի կերպ պիտի անմահանայ այս աշխարհիս վերայ: Ամեն բան գլորվում, գեալնն է ընկնում՝ մեր այս ու այն կողմում: Աստուած հարուածում է մեր չորս կողմում՝ մեր մերձակոյններին, մեր մտերիմ բարեկամներին ու մեր գլխաւորներին. այդ մեծերի ու բազմաւորների մէջ, որ գլորվում, գեալնն են ընկնում, մենք չենք շարժում, հանգիստ ենք սրտով, չենք մտածում, որ մի օր հերթը մեզ կգայ ու մենք էլ այդպէս կլինենք, կարծում ենք թէ՛ այդ ուրիշների համար էր միայն, մեզ բան չկայ, կարծես թէ՛ հարուածը միշտ պէտքէ գնար մեր այս ու այն կողմում, ու մեզ ամենեւին դիպչելու չէ, ու թէ մենք այս աշխարհիս վերայ այնպիսի պինդ ու հաստատ արմատներ ենք բռնել երկրիս մէջ, որ ամենեւին կարելի չէ մեզ տեղից հանել:

Մարդկային կեանքի չափ ու սահմանը մի և նոյնը չէ ամենի համար: մեզ ամենիս վիճակուած չէ հաւասար տարիներ տալիս:

Կան մարդիկ, որ իրանց կեանքումն աճու մեն, վեճանում անարգել ու խաղաղ վիճակի մէջ, երկար տարիներ ապրում ու խորին ծերութեան հասնում: Կան այնպիսիներն էլ, որ աշխարհք են գալիս՝ միայն երեւելու ու աչքի ընկնելու համար, և որոնք որ առաւօտ ծնում են, իրիկունք՝ մեռնում: Դաշտի ծաղիկների նման չեն ունենում ժամանակի մի միջոց թէ՛ երբ դուրս եկան, երբ չորացան ու անյայտացան: Ամենքիս համար էլ, որ այս աշխարհումն ապրումներ, անորոշ ու անյայտ է թէ՛ ինչքան պէտքէ ապրենք ու մեր կեանքի այդ անորոշ վիճակն մեզ արթուն չէ պահում, այլ թմրութեան է միայն տանում մեզ: Ամենւին չենք մշտաժամ, որ մահ կայ, մեռնել կայ, ինչու որ չենք իմանում թէ՛ մեր այլ և այլ հասակների մէջ երբ պէտքէ մեռնենք, որ զգոյշ մնանք ու մահուան պատրաստուենք: Եթէ որ հէնց մեր ծնած ժամանակը մեր ճակատին գրած լինէր թէ՛ քանի տարի պէտքէ ապրենք՝ ու երբ պէտքէ գոյ մեր վերջն, որ մեր օրերը շուարի նման պէտքէ անց կենան, ու հեռանան, այդ հաստատուն և որոշ կէտը մեր աչքի առաջ ունենալով, որչափ էլ դեռ հեռու լինէր մեզանից, մեր մտքից դուրս չէր գալ, միշտ մեզ կիրգուէր, հոգս անել կտար՝ ու ոչ մի բոլե չէր թողնիլ, որ մեր սիրտը հանգիստ մնայ, մեզ միշտ շատ կարճ կերեւէր այն ժամանակի միջոցն, որ մեր առաջն կունենայինք: այդ մտածմունքն, որ մեր գլխից հանել, դէն քցել չէինք կարողանալ, որչափ էլ որ ուզենայինք, ամեն բանից մեր սիրտը կկարէր, ոչ մի բան մեր աչքին չէր գալ, մեր զուարճութիւնների մէջ համ ու հոտ չէինք գտնիլ, մեր ունեցած բազմաւորութիւնն՝ մեզ համար եղած՝ թէ չեղած բանի պէս կը լինէր, բոլոր աշխարհս մեզ ծանր ու ձանձրալի մի բան կերեւէր: Բայց զարմանալի բան է, որ մի և նոյն այս մահն, որ ամեն մի օր, ամեն մի վայրկեան մեզ կարող է պատահել. չի թուլացնում մեր մէջ մեր եռանդն ու սէրը դէպի աշխարհս, դէպի նորա վայելչութիւնները, դէպի հարստութիւնն ու բազմաւորութիւնն, և որովհետեւ որոշ ու հաստատ կերպով մեզ յայտնի չէ, որ այսօր իսկ կմեռնենք, մենք այնպէս ենք ապրում, որ կարծես թէ մեր կեանքի տարիքն երբէք լրանալու չեն ու մենք յաւիտենական ենք:

(Խաբէ, Գաղէէէէէ)

Գրիգոր Նալիսկոպոս Աղափիրեան.